

հիւթ եւ ի պարարտութիւն վարդապետութեան¹, յուղարկէ գերանելին՝ ուր եւ երթալոցն էր: 4 Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանս:

5 Առ որով ժամանակաւ Արծիւղ անուն թագաւորեալ Վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնս եւ նորա շրջեալ զամենայն աշակերտաւքն², պատուիրեալ կալ ի ճշմարտութեանս³:

6 Յայնժամ իշխանին Տաշրացոց, առն պատուականի եւ աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. եւ նորա ամենսփիւռ վարդապետութիւնս⁴, ոչինչ պակասութեամբ⁵, քան զայլոցն գաւառաց անցուցեալ⁶:

7 Եւ յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց. եւ եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնս սրբոյն Սահակայ եւ ամենայն պատահելոցն տուեալ, պատմեր նոցա վասն այնր եւս⁷ նորագործ իրացն. որք իբրեւ⁸ լուան, առաւել գոհանային զպարգեւացն Աստուծոյ:

[Ի]

1 Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց⁹ երանելեացն՝ զհրեանց ազգին զդպրութիւն¹⁰ առաւել յարգել եւ դիւրացուցանել¹¹: 2 Ձեռն ի գործ արկաներ ի թարգմանել եւ ի գրել մեծն Իսահակ՝ ըստ¹² յառաջագոյն սովորութեանս:

3 Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս¹³ յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն¹⁴:

1 *ce* վարդապետութեան

2 *ai* աշակերտոք / *c* աշակերտելօքն

3 *dce* ճշմարտութեան

4 *c* նորա զիր ամենասփիւռ / *de* զամենասփիւռ վարդապետութեանս

5 *b* պակասութիւն / *c* պակասագոյն / *d* պակասութեամբք

6 *c ուղղ.* ցուցեալ

7 *b չիք* եւս

8 *bc* որոց իբրեւ

9 *b* երկոցունցն

10 *cde* զդպրութիւնս

11 *b* դպրացուցանել

12 *e* արկաներ մեծն Իսահակ ի գրել եւ ի թարգմանել ըստ

13 *b* եղբարս

14 *b* դարձուցին